

ԽՈՒՉԱԿ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

գրութիւններ, որոնք եւ չեն դարձուի՝
պէտք է խրկել «խուզակի» վարչութեան
Բուսոյ
Administration dn «Khousag» Rousthouk

Պուշկարիայի համար տարեկան 10 ֆր.

« « Վեցամսեան 5 «

Օսար երկիրներու համար տարեկան 12 «

« « « Վցմայ. 6 «

ՀԱՄԱՍԱՄԱՅԻՆՈՒԹԻՒՆ

«Խուզակ»ի եօթներորդ թիւին մէջ
«Ճամարիտ ուղին» վերնագիրով յոգ-
ուածը կը պարունակէր սա խոսքը. թէ
ճակատագրականութիւն չկայ այլ տը-
գիտութիւն կայ:

Այդ խոսքը՝ առանց մեկնութիւն
ունենալով գովը, կրնայ քաջաշուքնե-
րու տեղ տալ և հակառակն երեւցնել
մեզ «անհատականութիւնը և համե-
րաշխութիւնը» վերնագիրով յոգուածին
թարգմանութեամբ, ուր կ'ըսուի տեղ
մը թէ ինչ որ ալ կարենանք բնել
կամ լողոքել, սկզբնական ճակատա-
գրականութիւն մը կը սաւառնի մեր
ամէնուն վրայ, և այլն: Այս հակառու-
թիւնը առերեւոյթ է և այժմ ճակա-
տագրականութեան բացատրութեան
մէջ մտնելով պիտի տեսնենք թէ հա-
մաձայն ենք մենք մեզ հետ:

Ինչպէս որ կը շփոթուին բնական
օրէնքի և դրական օրէնքի գաղափար-
ները իրարու հետ շատ մը մարդկայ-
ին ուղեղներու մէջ, այսպէս ալ հաւա-
նական է որ շփոթուի այդ շատերուն
կողմէ աւտուածաբանական ճակատա-
գրականութիւնը գիտական ճակատա-
գրականութեան հետ. այս շփոթու-

թեան յանցանքը կ'իյնայ մանաւանդ
մարդկային ծուլութեան և լեզուական
ազգատութեան, որոնց համակերպելով
մին կը գործածէ յաճախ տարբեր ե-
րեւոյթներու կամ տարբեր մտածում-
ներու համար մի բառ կամ մի լա-
ցատրութիւն, որ աւելի հիմնուած է
անոնց մասնակի կամ ամբողջական
նմանութեանը քան թէ նոյնութեանը
վրայ: Օրինակի համար, առնենք աւտ-
ուած բառը. աւտուածեան (déiste) մը,
աւտուածական (théiste) մը, համաւա-
ուածեան մը, բուն քրիստոնեայ աւտ-
ուածապաշտ մը, տրիմական քրիստոնե-
այ մը, աղատամիտ աւտուածապաշտ
մը, և այլն, տարբեր գաղափարներ ու-
նին Աւտուածի գոյութեան, յատկու-
թիւններուն և գործունէութեան վրայ.
և սակայն նոյն անունով կը մ'կրտեն
իրենց ըմբռնած աւտուածները:

Աւտուածալանական ճակատագրա-
կանութեամբ կ'ըմբռնենք ամենակա-
րող, ամենազէտ, ամենատես էակ մը,
անձով տարբեր տիեզերքէն, որ գիտէ
անցեալը, ներկան ու ապագան, որ կը
կառավարէ աշխարհ իր խորհուրդնե-
րով որ անգնելի են, իր կամքով որ
անիմանալի է, որ կը յայտնէ մարդու
որդինքնութիւնը իր կամքը, որ ատեն որ

ուղէ և ի՛նչ կերպով որ ուղէ, որ ունի, մէկ խոսքով, ափին մէջ տիեզերգի ճակատագիրը: Այս բմլուճումը այլափոխեալ ձևով մեզ կը հաւնի, եթէ չենք սխալիր, հնութենէն սը՝ չկրնալով հաւկնալ կամ հետախուղել ամէն արգիւնքներուն պատճառները, ամէն գործողութիւններուն շարժառիթները, երեւակայեց մարդկային կեանքի յարախօթիս և իրեն համար անխմանալի երեւոյթներուն համար աստուածներէն վեր աւտուած մը ճակատագիր անուշով, կոյր, Քառսին և Գիւլին որդին, որուն ոտքին տակն է երկրագունտը, ձեռքին մէջ՝ մահկանացուներուն բազմապարունակող աղետալեր կամ լաւերէր աւիորը, որուն վճիռները անդառնալի են և որուն իշխանութիւնը կը տարածուի միջև անգամ աւտուածներուն վրայ:

Այսպիսի վարդապետութիւն մը ջլատիչ ու աղետալի է իր հետեւութիւններով, և սխալ գիտնականորէն,

Ջլատիչ ու աղետալի է, որովհետեւ ամէն ինչ կ'ենթարկուի կամայականութեան: Մենք մարդկային էակներս ուրիշ բան չենք այն ատեն բայց եթէ խամաճիկներ, որ կը շարժինք առանց գիտնալու թէ ինչո՞ւ և ի՛նչպէս, որ չենք գիտեր թէ ի՛նչ պիտի ըլլայ վայրկեան մը վերջը: Եթէ երկիրս կը շարժի, կրնայ կանգ առնել իսկոյն. եթէ արեւը կը լիայլի ոսկեհեր, կրնայ խաւարիլ անմիջապէս. գետերը կրնան իրենց ակերը դառնալ, եղանակները՝ իրար խառնուիլ, հովերը՝ ուղղութիւններնին կորանցնել, և այլն. և այս ամենը կախուելով էակի մը կամքէն, հակառակ բնական օրէնքներուն: Այսպիսի վարդապետութիւն մը ուղղախառ կերպով դառնող ժողովուրդի մը մէջ չկրնար դարգանալ, ի՛նչ կ'ընենք, չկրնար սկսիլ ո՛չ ար-

ուեստ, ո՛չ զիտութիւն և ոչ մի բան որ կը մտնէ ճշմարիտ քաղաքակրթութեան ահմանին մէջ: Այդպիսի ժողովուրդ մը՝ յարատեւ ահուգողի ու անառուչութեան մասնուած, ոչ կը յառաջանայ և ոչ ալ կը նահանջէ, կը մնայ անշարժ, եթէ կարելի է այսպէս բաւել: Օրինակներ չեն պակսիր մեր շուրջը, բաւական է որ ունենանք դիտող աչքեր ու խորհող միտք: Սխալ է զիտնականորէն, որովհետեւ կատարուած գիւտերը, արուեստական ու գիտական յառաջգիմութիւնները, մեր ամէնորեայ փորձառութիւնը կ'ապացուցանեն որ լնութիւնը ունի իր գործելու որոշ օրէքները, զորս ճանչնալու պէտք է հետամտինք յարատեւ կերպով անոնցմէ օգտուելու համար, և թէ լներեւոյթները՝ կամայականութեան ենթակայ համարիլը արդիւնք է աւելի մեր ագիտութեան քան ճշմարտութեան: Գիտութիւնը կը ծիծաղի, օրինակի համար, երբ համաճարակներու, և ուրի, հիւանդութեան և ուրիշ աղէտներու ատեն, մեր աչքերը երկինք լարձրացնելով ազիզորմ՝ կ'արտասուենք, կամ ուխտ կ'ընենք, ուխտի կ'երթանք, մատաղ կը կտրենք, թափօր կը կադմենք, և այլն, և իրաւունք ունի: Որովհետեւ այդ աղէտներուն պատճառները բմլուճում մեր եղանակը տղայական է և ծաղրի կամ կարեկցութեան արժանի, նայելով դիտողին լնութեան, նայելով թէ գիտողը Տէմօկրիթ մ'է թէ Հերակլիթ մ'ը եւ դուք նոյնիսկ բնութեցողներ չպիտի խնդայիք կամ մտածէիք երբ պարզ մանկիկ մը ծեծէր զար մը որուն դարներով ցաւցուցած ըլլար ոտքը, կամ թէ դուռի մը չբացուելուն վրայ լար. մանկիկին այդ բնութագրը կը լացատրուի հոգեբանական այս գործողութեամբ՝ որ կը կատարուի ա-

նոր ուղեղին մէջ, թէ այդ քարին և այդ դուռին մէջը և կամ զանոնք վաւրոյ մէկը կայ որ ուղեց իրեն վնասել կամ զինք նեղել: Ինչպէս կը տեսնուի, շատ պարագաներու մէջ տարբերութիւն չունինք մանկիկներէն, և որովհետեւ որ տարիքով յառաջացած ենք, զեռ աղայ ենք: Լակայն մտածումով: Հարկ է բռնել որ չենք բնդունիր այսպիսի ճակատագրականութիւն մը, ոչ թէ որովհետեւ տխուր է միայն այլ որովհետեւ սխալ է:

Փիտական ճակատագրականութեամբ կ'ըմբռնենք որ մենք մէկ կողմէն արդիւնք ենք և միւս կողմէն պատճառ, արդիւնք անցեալին և պատճառ ապագային: Թէ կը ժառանգենք մեր նախնիքներէն մեր էութիւնը՝ ծնանելու պահուն և ասով պատասխանատու ենք մեր հայրերուն, այսինքն առաւել կամ նուազ պիտի քաւենք անոնց յանցանքները և վարձատրութիւնք անոնց ընտիր կեանքին համար դորս կը կրենք մեր մէջ, ուրիշ բաւերով, մեր ծնողները մեռած չեն, կ'ապրին մեզմով, կը տառապին և կը վայելեն մեզմով: Մեր ծնողներուն յանցանքներուն մեծութեան և տեսակին համեմատ պիտի տառապենք երկար կամ կարճատեւ, խիստ կամ թեթեւ կերպով: Եթէ հոտ վերջանար ամէն ինչ: Մեր գոյութիւնը՝ ինչպէս որ կ'ընտանք մեր ծնողներէն, նոյնը չը մնար վերջը, այլ կ'ենթարկուի բնաշնչութեան, ֆիզիկական միջավայրին, բնկերական միջավայրին, դատարարականութեան, կրթութեան կողմէ: Մենք կ'ըլլանք մի և նոյն ատեն թէ մեր ծնողները և թէ ոչ ծնողները: Մեր բնաշնչութեան լաւութիւնը կախում ունի հետեւաբար վերեւ յիշուած պայմաններուն լաւութենէն, որպէսզի կարենանք առաւել կամ նուազ կերպով թեթեւցնել մեր

վրայ ծանրացող պատիժները, և թէ չենք կրնար բոլորովին վերցնել դանոնք, և աւելցնել օրհնութիւնները: Հասնելու համար օր է օր աւելի բարեաւտի վիճակի մը, պէտք է կատարեալ անշահախնդրութեամբ և անշահութեամբ ուսումնասիրել թէ ներքին և թէ արտաքին բնութիւնը, գտնելու ջանալ ամէն բնական օրէնքները և առնց համապատասխան ընթացք մը ունենալ: Ինչպէս կը տեսնուի, մեր ճակատագիրը մի և նոյն ատեն անկախ է մեզմէ կերպով մը և կախում ունի մեզմէ: մեր բաւը անանհատէն աւելի պէտք է մարդկութիւնը հասկնալ հոռ: Կախումի և անկախութեան այս վիճակը մէկէն բացատրելու համար բաւ մը պէտք է որպէսզի աղատինք ճակատագրականութիւն բառի շիփումէն: Սա՛ մնասակար և սխալ է, միւսը՝ օգտակար և ճիշդ: այն՝ զերիներ կը պատրաստէ, միջդեռ սա՛ համեմալիս ու կարեկից քաղաքացիներ:

Կը յուանք թէ կըցանք պարզել առերեւոյթ հակասութիւնը, կամ աւելի լաւ թափանցել տալ մեր միտքին. ասով մէկտեղ, եթէ հարկ ըլլայ նորէն Կը դառնանք այս նիւթին:

ՍԵՒ ԴԲԾԱԿ, ՍԵՒ ԳԱԳԱՂ

Տըպլին հասկցուց թէ՛ Թագուհին յուրեանը ժողովրդային դազադին վերեւն է որ կը փայլի:

Սեւ դրօշակը ու սեւ ճազը, որոնք փողոցներէն անցան ամէնէն կսկծագին արտայայտութիւններն են ժողովուրդի մը, որ իր բազմակողմանի տառապանքներովը կը տապկուի:

Ազնուապետական շրջանակներու մէջ ատոր «ցոյց» անունը տուեր են—օ՛հ, սեւ դազադին ցոյցը... և կառավարական մարդեր ալ հալածանքի ենթարկեր են դազա-

դակիր ժողովուրդը: Կը զարմանամ թէ ի՞նչու արցունքն ալ չեն հալածեր, երբ ան կելլայ ժողովուրդին աչքէն. . . :

Սակայն, դադարը, հալածուած թէ չը հալածուած՝ լուսերուն ու ծաղիկներուն մէջն պիտի ապրի, որովհետեւ ժողովուրդինն է ան, եւ որովհետեւ ժողովուրդը միայն գիտէ անոր ի՞նչ ըլլալը: Իսկ միւս տարրը, ա՛ն, որ հալածել գիտէ ու արդարութիւն չը գիտեր, ա՛ն որ ապերժանիկ ընել գիտէ ու երջանիկ՝ երէ՛էք, ատ միւս տարրը. . . ան՝ իր ինկած պզտիկութեանը մէջ արդէն գաճաճ՝ իր որդնոտ ու մակաբոյժ գերին մէջ միեակ, կասեցնող թումբն ալ պիտի եղած ըլլայ միանգամայն երջանկարար քաղաքակրթութեան:

Ինքնամոռութեամբ մը, խորին մտածում մը կը ցուցնէ թէ՛ մարդկութիւնը մինչեւ այս դարը ո՛րչափ երջանիկ պիտի ըլլար, եթէ ամէն իմացական շարժում, լայն ու օգտակար, խեղժուած չըլլային կեղեքողներէ ու բռնապետներէ: Կա՛հ մը ջնջեցէք միտքերնուդ մէջէն բոլոր գաղափարի սեղմումները ու ճգմումները, որոնք եղած են ՚ի նպաստ ազնուական ու տիրող տարրին, արգիւնք՝ ընկերական սխալ կազմակերպութեան մը, ու պիտի տեսնաք թէ՛ ժ՞ծ ըզ դարը բարձրագոյն քաղաքակրթութեան դար մը եղած պիտի ըլլար, ի՛րաւ լոյսի դար մը: Մարդերը գիտուններ պիտի ըլլային ամենն ալ կեանքը վայելող եղբայրաբար, ամենն ալ մեծցած հոգիով ու սիրտով:

Հիմա՞: Ո՛րչափ ահաւոր է տարբերութիւնը, հիմա մարդերը տգէտ են ու ամէն նկատումները կը դառնան միակ տենջի մը շուրջը, անյապ չահին: Փաղաքակրթութեան երեքտրական լոյսին ետեւ, աս դարուն, գտնուեցան Պարզեր, որոնք, գաղանին պէս, որ որսի մը համար անմեղ կենդանի մը կը փեթուտէ, իրենց շահուն համար փեթուտեցին իրենց ժողովուրդը, ու, անուղղապէս, իրենց չեղուք դիրքին մէջ, Հայերն ալ, Յոյներն ալ, ուրիշներ ալ: Բայց ինչ որ ալ ըլլայ ժողովրդական մարտիրոսացումին այս խորհրդանշանները ամէնէն պերճ կերպով կը յատկանիչեն աս դարուն ոգին:

* * *

Հոն սեւ զրօշակին ու սեւ զազաղին նայի՛նք: Եղբայրներ են ան տառապողներն

ալ, մարդեր՝ մեզի պէս որոնք շատ յուսահատած են ալ: Մենք, մեր ցաւերու չըջանակին մէջ կը փակուինք, անոնցը հասկնալով է որ մերը պիտի կրնանք հասկնալ, ու չէ՛ք կարծեր որ մերը հասկնալու շատ պէտք ունենանք, մանաւանդ հիմա: Օրինակ առնենք անոնցմէ. փայլուն Անգղիան է որ իր գերիշխանութեանը տակ առած է Իսլանտան, եւ սակայն, նորէն ժողովուրդը ահուելի ցաւեր ունի: Ամէն լայն չըջահայեացութենէ զուրկ՝ մեր լոկ ազգային ցաւերուն մէջ, խենդեցածի պէս կը պոռանք. « Թէ հիմա ընթացիկ ազգային անկախութեան ժամանակն է. . . »

Հետեւանք սա կըլլայ որ, մենք ալ, նորէն, ուրիշ ձեւի մը տակ, կը տառապինք ծալինցիներուն պէս ու կըստիպուինք անտեսական, բարոյական խորունկ չարչարանքներէն, զոր հիմա չենք սեղեր կոր դուշակել, պաշտօնական յորեւեաններու առթիւ, սեւ զրօշակ ու սեւ զազաղ պտտցնելու չափ առաջ երթալ:

Ու, ինչպէս Տալինցիներուն մարտիրոսութեանը, վրայ խոփած Մեծ—Պատուը, մեր ցաւերուն վրայ ալ կրնան գտնուիլ անբարոյական եւ վատ ու ցած էակներ, որոնք, իրենց յորեւեաններուն առթիւ, բաժակներ պարպեն այն մաղթանքով ինչ մաղթանքով որ Թագուհին կը պախպէ անշուշտ պաշտօնական մարդերու հետ. «Այս քաժակը ժողովուրդներու sqhsurkանը կենաց»:

Խ. Թ

. . . 21 Յուլիս 1897

ԱՅՍ ԷՐ ՊԱԿԱՍԸ

Ամսոյս 22 ին, այսինքն վաղը Պրիւքսելի պատժական դատարանը պիտի զբաղի դատով մը որ շատ հետաքրքրական է եւ որ կղերի մը հրէշային մէկ ստորնութիւնը պիտի հաստատէ:

Ամբաստանալը կարեւոր արուարձանի մը բարեհամբաւ, քահանան է, սովորական ձերիակեր մը, որ իր էսնաֆին յատուկ ստոր կեղծաւորութեամբ՝ ժողովուրդին միամտու-

թիւնը, Կրիստոսի անունն ու եկեղեցին կը շահագործէ, ու անպիսի մութին մէջ, կեղտոտութեան էն անարդը ի գործ կը դնէ:

Մենք լսել էինք, իմացել էինք որ սիրային յաղթանակներու մէջ աշխարհականներէն աւելի կ'ընենք ունեցած են ամենանշանանոր ասպետներ, որոնք աշխարհիկ մարդոց ամենէն պաշտօնը եւ ամենէն առփոտն անդամ կը գերազանցեն:

Սակայն երբէք չէինք կարծել որ ծայրայեղ սրիկայութեան վերին աստիճանի նշանաւոր ներկայացուցիչներ ալ ունին:

Հարիւրաւոր վկաներ կան, պատրաստ հաստատելու, թէ այս մաքրակրօն քահանան քաղնաթիւ պատանիներու պատիւը բռնաբարած է չարաչար:

Մասաղհասակ որբ մըն է որ այդ հոգեւոր առջիկ հօր հրէշութիւնը հրապարակ հանելու կուգայ: Խ'եղճ տղան՝ ինքն ալ պղծուած այդ սրբազան հովիւէն՝ արցունքոտ աչքով եւ վիրաւոր սրտով կը պատմէ գործը իր խնամակալին:

Կենտութիւն մը կը բացուի եւ անա՛ ուրիշներու հետ, ԵՍ էն աւելի մանրիկ տղաքներ անձնական փորձառութեամբ կուգան վրկայութիւն տալ, թէ նորին Սրբութիւնը իր գաղանական վայրագ կիրքը կը յաղեցնէ է այն փոքրիկներուն վրայ զորս Յիսուս կ'օրհնէր հայրական գթութեամբ ու խանդաղատանքով:

Եւ հիմայ պրիւքսիլի կ'ընենք բոլոր ճիգերով կը փորձեն պաշտպանել իրենց հոգեկցորդ եղբայրը որպէսզի դատարար լինի վարկը չը կտորի...:

Շատ հաճելի չէ մեզ ասանկ կսկիծ տուող լուրերով լեցնել այս էջերը. սակայն սոսկալի իրողութիւնը անոնցմէն է որոնք մարդու անպայման ուշադրութիւնը կը հրուիրեն իրենց վրայ:

Նշանակելով այս հրէշային դէպքը, մեր նպատակն է ցոյց տալ հասարակութեան, թէ պէտք չէ նախապաշարուած մնալ պաշտօնական անուններու եւ անձերու վրայ. պէտք չէ երբէք միամիտ դառնալ ու խաբուիլ կ'ընենք խորհրդաւոր երեւոյթէն:

Ահաւասիկ քահանայ մը որուն սուրբ անունէն ու հոգեւոր պաշտօնէն հրապուրուած՝ շատեր իրենց զաւակները կը յանձնեն անոր խնամքին, առանց քննելու, թէ ինչ բարոյական ունի ան:

Ճէրաէր, է կամ մանաւանդ վարդապետ է կ'ըսեն ու ալեւս մեզք կը համարեն քննադատել անոր անձը: Ժողովուրդին այս կոյր վստահութենէն օգուտ քաղելով, անդին, տէրաէր կամ վարդապետն ալ իր խնամքին յանձնուած սիրուն մանկիկներու պատիւը անդամ կ'արատաւորէ շնական ստորնութեամբ:

Դեռ ի՛նչ ցածութիւններ, խաբէութիւններ կ'ուզէք որ ի գործ դրած չըլլայ կըղերը, Ղեւտացիներու այս դատարկապորտ սերունդը: Պէտք է խոստովանիլ սակայն որ յաճախ տէրաէրներուն կամ վարդապետներուն ասանկ գարշելի, աղտոտ կեանք մը վարելուն պատճառ եղողը ինքը, ժողովուրդն է, որ աղաւնիի միամտութեամբ կը հաւատայ անոնց սուտով ու չորոքորովութեամբ համեմուած խօսքերուն եւ երբէք հետամուտ չըլլար գիտնալու, թէ ի՛նչ է անոնց ներքին կեանքը:

Յանցանքը ժողովուրդինն է որ հլու հրպատակութեամբ անձնատուր եղած է կղերին, կոյր հնազաղութեամբ առանց որ եւէ քննութեան, կը հետեւի անոր բոլոր հրամաններուն եւ բացարձակապէս կը վստահի անոր յանձնել իր զաւակն ալ, քսակն ալ:

Ասոր համար է որ կղերն ալ, անպատկառ ըրութեամբ կ'ուզէ շարունակ իր շահերուն հպատակեցնել եւ իր հաշուոյն գործածել ժողովուրդին բարեսրտութիւնն ու միամտութիւնը:

Գուցէ մեր այս աս զերը կարգացողներուն մէջ կը գտնուին անանկ մարդիկ որոնք Պրիւքսիլի վաւաշտ քահանայէն աւելի զայրանան մեզ դէմ, որ ճշմարտութիւնը կը խօսինք:

Եկեղեցականները յարգել պէտք է կը պոռան մեզի:

Այս քահանան ալ յարգե՞նք արդեօք:

Մենք մեր յարգանքը չենք զլանար ամեն արժանաւորի, ինչ պաշտօն ալ ունենայ այն բաւ է որ ձրիակեր մը չըլլայ եւ ծառայէ ընկերութեան օգտակարապէս իր վարած պաշտօնովը. սակայն կաթնաու կով մը չենք դառնար կղերին ձեռքը եւ ձրի հաց չենք տար անոր մանաւանդ՝ երբ աս պուշ մըն է կամ անբարոյականութեան կենդանի պատկեր մը: Մեզի համար ամեն կեղտոտութիւն, ամեն ձրիակերութիւն քննադատելի է, որու անձի վրայ ալ տեսնուի:

Երևայ արգիօք կղերին անձը զեռ ան-
քննադատելի համարել ժողովուրդ մը որ
այսպէս ակնատես կամ ակննջալուր կըլլայ
անոր վայրենութեան ու բարբարոսութեան

Մենք այն անխախտ համոզումը ունինք
որ ժողովուրդը հեազհետէ պիտի հասկնայ
այդ դատակարգին ստորնութիւնները եւ
անվերջ անարդանքով պիտի պատժէ զան:

Լ.

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

Հ Ա Մ Ե Ր Ա Շ Խ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը

Արդարեւ, եթէ անհատը միայն ինքնիւ-
մէն կը բարձրանայ, պատասխանատու պէտք
է ըլլայ միայն իր յատուկ գործերուն, պէտք
է ունենայ միայն անհատական, անձնական
անուն մը, չիշելով ո՛ր եւ է յիշատակ, իր
սոսկ աշխատութիւններուն ու գործերուն
յիշատակէն զատ, եւ պէտք է մասնակցի
բանի մը մէջ իր սերողներուն կամ կողմն-
ազգականներուն բաղդին: Երբ մէկը կուզէ,
ոչ առանց պատճառի հաւանականութեան,
ազատիլ ընտանիքի մը անպատուութենէն,
պէտք է նաեւ չհետամտիլ պատուաւորու-
թեան զոր կրնայ տալ անուն մը, եւ երբ
կը մերժեն իրենց մերձաւորներուն մասին
ամէն պատասխանատուութիւն, պէտք է
զայն մերժել ինչքերու ժառանգութեան
ձեւին տակ, զորս իրենք ստացած չեն, ինչ-
պէս պարտքի ձեւին տակ զոր բրած չեն:

Հարկ է կայ խօսիլ յարարերութիւննե-
րու եւ յանձնարարութիւններու ազդեցու-
թեան վրայ, որ թերեւ ա՛յնքան մեծ եղած
չէ որքան այս ժամանակին մէջ եւ որ
ա՛յնքան հզօր կերպով կը նպաստէ միջա-
կութիւններուն ի վնաս բնականաբար ճշ-
մարիտ արժանիքի տէր անձերուն: Բայց
մարդ է կրնար զայն արգիլել:

Բաւական եզական է որ այս դարուն
վերջը, ուր այնքան կը խօսուի ընկերվա-
րութեան վրայ եւ բառը՝ Ֆրանսայի մէջ
գոնէ, նորաձեւութեան կարգն է, անհատա-
կանութեան վարդապետութիւնը՝ որ անոր

(ընկերվարութեան) ժխտումն է, հաստատուի
թէ՛ անոցմէ որ իրենք իրենք ընկերվարա-
կան կը նկատեն եւ թէ՛ անոցմէ որ կար-
ծես պարտ էին ներկայացնել կամ պաշտ-
պանել հին ընկերական աւանգուծիւննե-
րը: Կը հասկցուի որ այս վարդապետութիւ-
նը պատիւ գտած ըլլայ աւատական ընկե-
րութեան մը մէջ, քանի որ հոն կրնայ ար-
դարացնել զօրութեան իրաւունքին ծայրա-
յեղութիւնները: Բայց չը հասկցուի որ ա-
նիկայ կուսակիցներ գտնէ ռամկապետական
ընկերութեան մը մէջ, ուր շատ յայտնի
կ'երեւայ որ անհատը կատարելապէս նշաւ-
ակ է ոչ միայն սկզբնական ազդեցութիւն-
ներուն, այլ եւ ընկերական, զատիտարակա-
կան, օրէնսդրական, միջավայրի, պարագանե-
ներու, գէպքերու բոլոր ազդեցութիւննե-
րուն, որոնց դէմ բացարձակապէս անկարող
է, եւ միեւնոյն ատեն ջախջախուած է հաւա-
քական ուժերու ամբողջ ծանրութենէն:

Թերեւս այս ազդեցութիւններուն ձակա-
տադրականութիւնը եւ այս ջախջախումն
են որ ներշնչած են անհատական վարդա-
պետութիւնը իբրեւ բողոք մը: Բայց այս
ձեւին տակ եղած բողոքը պարապ է ինչ-
պէս պարապ պիտի ըլլար մահին դէմ մար-
մնական անմահութեան վարդապետութիւն
մը: Դէպքերը գոյութիւն ունենալէ չեն դա-
գորի, զանոնք ուրանալով, անոնց դէմ
բողոքելով կամ պնդելով թէ անոնք ուրիշ
կերպ են: Անհատը վերացում մ'է, միտքին
մէկ յղացումը, ինչպէս մարդկութիւնը:
Իրականօրէն է կան անհատներ, միայն էակ-
ներ կան, չկայ մազկութիւն, կան մարդիկ:

Իւրաքանչիւր էակ ունի բան մը՝ որ
իրեն է յատուկ, անհատական—իր կազմա-
ւորութիւնը եւ հետեւաբար իր էութեան,
զգալու, զարգանալու եւ գործելու կերպը:
Բայց այս կազմաւորութիւնը կ'ընդունի նա
իր սերողներէն, որոնք զինք ծնած են
պայմաններու մէջ, ուր գիպուածը աւելի
տեղ կը բռնէ քան կամքը, եւ, իր զարգաց-
ման ու որպիսութեան գալով, ասոնք են-
թարկուած են միջավայրի բոլոր ազդեցու-
թիւններուն, զորս անհատը չընտրեր եւ
զորս է կրնար փոխել: Իր կազմաւորութեան
մէջ, կը կրէ բնագիտական ազգականներուն
(agent) ազդեցութիւնը, որոնք կը շրջապա-
տեն զինք եւ կը կազմեն իր խառնուածքը,
իր ուղեղայնութեան (cérébralité) մէջ, ուղ-

դակի կամ անուղղակի ազդեցութիւնը կը կրէ իր զստափարակներուն, տեսած օրինակներուն եւ տեսածներուն, լսածին եւ կարգացածին, ինչ որ կը կազմէ իր մտածումը, եւ իր գործողութեան մէջ կը կրէ պարագաներուն ազդեցութիւնը, որոնք կը կազմեն իր ճակատագիրը: Խեղճ անհատ: Ի՞նչ անհատական կը մնայ իրեն:

Շարունակելի

ԾԱՆ-ԾԱԴ ՌՈՒՍՕ

Է Մ Ի Լ

Այս գանազանութիւնները չեն վերաբերիր իրական կեանքին: Հասնելու տարեկանին առաջ մեր տղաքները կը զործածեն ուրիշ կարողութիւններ, զգայարաններու կարողութիւններէն զատ. բանականութիւնը եւ զգացումը արդէն կան իրենց կեանքին մէջ. խիղճը արդէն իրենց առաջնորդն է: Բնութիւնը չճանչնար այսպիսի դոյ խորշեր, որոնք կը բացուին ըստած պահուն եւ իրարու հետ յարաբերութիւն չունին որոշեալ ժամանակամիջոցներու մէջ: Բնութիւնը՝ տղան ըրած է աւելի խառնամասն. իր մտաւորական կեանքը եւ իր բարոյական կեանքը կ'արթնան շատ աւելի կանուխ այն թուականէն, զոր Ռուսօ կը նշանակէ, իրեն ապացուցումներուն դիւրութեան համար:

Բայց իր սկզբունքը անվկանդ է: Դաստիարակութիւնը պէտք է բնութեան հետեւի: Հոտ էր նորութիւնը: Աս' սովորութեան հակուզին կ'ըսէր Ռուսօ, եւ գրեթէ միշտ ազէկ պիտի ընես: Կը խնամակալէին եւ կը նեղէին տղաքները. Ռուսօ կ'ուզէ որ ազատ ըլլան անոնք: Կ'աշխատէին զանոնք կրթել. Ն'ա կ'ուզէ որ թողուն որ աճին անոնք: Եր փութային զանոնք առաջնորդել մէկ ուսում մէն միւսը. Ն'ա կուզէ որ ժամանակ կորսնցնեն: Հոգ կը տանէին միայն զանոնք փայլեցնելու. կ'ուզէ որ անոնք ըլլան պարզ ու գեղջուկ: Եր մշակէին միայն անոնց յիշողութիւնը. Ն'ա զայս անմշակ կը թողու:

Եր ճնշէին զանոնք տրամաբանութիւններով պարտականութիւններով, զիրքերով. Ն'ա զանոնք ամէնը պտայտի կը զրկէ եւ միմիայն մարմինով կ'զբաղի:

Արդարեւ առաջին անհրաժեշտ բանն է այս:

Ռուսօ կ'ուզէ որ տղան մեծնայ զուրք, բայց օգին, ազատ ազատ զրօնու զաշտին մէջ, չարքաշ զառնայ հովին, ցորտին, արեւին, յովնութեան դէմ, լիաթօք չունէ առնէ, ցատկէ, վազէ, ազմուկով խաղայ, չափազանց խաղայ, հնազանդի չարմիլու ու գործելու հարկին, որ կը զրկէ իր անգամները: Ի՞նչ աւելի եւ աւելի լաւ կարելի է պահանջել պզտիկ տղէն որ զուրս կուգայ առաջին մանկութենէն: Ի՞նչ զստափարակութիւն հաւասար է ասոր:

Անտարակոյս ամէնը չեն կրնար վայելի դաշտային այս պիտի կեանքի մը բարեքները. բայց մեր քաղաքներուն մէջ իսկ չկայ միթէ դարման մ'ասոր՝ ընտանիքներուն եւ նոյն իսկ դպրոցներուն համար: Պէտք է մօտենալ որքան կարելի է այս առողջարար պայմաններուն եւ մեր մայր վարժարանները, մեր պզտիկ լեկէոնները կրնան եւ պարտին ատոր ձգտել:

Շուտով անգամներու այս բնական, բոլորովին ինքնածին ու ազմկալի մարդանքը կարելի պիտի ըլլայ ճարտարօրէն ուղղել: Մանուկը կը մեծնայ. պէտք է ազկէ օգուտ քաղել մշակելու համար իր զգայարանները: Ռուսօ կուտայ այդ մասին խմաստուն խորհուրդներ, որոնց մանրամասնութիւնը կրնայ երբեմն երեւիլ չափազանց կամ մտացածին. բայց այսու հանդերձ անոնք նուազ օգտակար չեն երբ ամբողջութեանը հետեւինք:

Ռուսօ կ'ուզէ որ տակաւ առ տակաւ, խելացի կերպով աստիճանաւորուած փորձերու շարքով մը մշակին չօչափելիքը, տեսողութիւնը, հեռաւորութիւններու նկատուողութիւնը, լսելիքը, հոտոտելիքը, ճաշակելիքը: Ասոնք ա'լ եւս պարզ մարմնակրթանքներ չեն. միտքը՝ իր բաժինն ունի, ուսումը՝ մէջ կը մտնէ, թէեւ ինք հակառակի ասոր: Ասոնք մեթոտաւոր զիտուկան ուսումներ չեն, որոնք կ'զեն տղան գիրքերուն վրայ, լաւ՝. բայց միեւնոյն ատեն երկրորդափութեան զծաղրութեան, երաժշտութեան ուսումնէ:

Մանաւանդ անդադար կոչում կ'ընէ տղուն խորհրդածութեան, ձեռներեցութեան, փորձարկութեան experience : Հոտ նաեւ Ռուսո նորակարգիչ մ'է, որուն դասերը չպիտի կրնար ընդունիլ չափ մէկը: Կարեւոր չէ վերաբաղեցիկ կարկանդակի մրցումը, բնագետի տուփը, բակլայի ածուն: Կարեւոր չէ կղզիացնել տղան, չըջապատել զայն մանկավարժական վարպետութիւններով եւ մեքենայութիւններով, մեծ աշխատութեամբ փնտռել առիթներ զայն իրականութիւններու հետ չփման մէջ դնելու:

Առիթները չեն պակսիր. բաւ է որ օգուտ քաղուի անոնց մէջ: Մանաւանդ բաւ է որ կարենայ մին լաւ թափանցել այնքան իմաստուն այս մտածման — ուշադիր դարձնել տղան իրեն դպածին, փոխանակ մոլորեցնելու զայն հեռուն գաղափարներու ու նիւթերու մէջ, որոնք իր հասողութեան մէջ չեն եւ որոնք զինք չեն հետաքրքրեր:

Այդ էր որ Ռուսոն կ'անուանէր ժամանակ կորսնցնել, զայն շահելու համար: Թողուլ տղուն կարողութիւնները որ զարգանան յամբօրէն, բնականօրէն, իրերու հետ չփուելով, ժամանակ տալ անոնց որ կարգաւ բացուին, առանց զանոնք փութացնելու վաղահաս կամ չափազանց ուսուցմամբ, որ զանոնք (կարողութիւնները) խղճելու վտանգը կ'արտադնէ, թողուլ որ տղայութիւնը հասուննայ տղուն մէջ, — զրկուիլ է սկզբիկ սքանչելիքներ կազմելու հաճոյքէն, ուսուցիչներուն ճարտարութիւնը երեւան հանելէ, 'իմաստ մրձակիցներուն փայլելէն, քաջքշելու, լաւ մը չընելու երեւոյթն ունենալ է, բացասական դաստիարակութիւն մը տալ է:

Ռուսոի նայելով, այս դաստիարակութիւնը միակ լաւնէ, միակն է որ կը յարմարի առաջին տարիներուն, միակն է որ կը յարգէ տղուն մտաւորական եւ Գիգիգական աճման կանոնաւոր ընթացքը: Դուք գիտութիւն կուտաք կ'ըսէ իր ընդդիմաբաններուն, այն ուսուցիչներուն՝ որոնք կը

մերժեն իր բացասական դաստիարակութեան գաղափարը, չափ լաւ եւ կը զբաղիմ զայն ստանալու յատուկ գործիքով:

Հոս նորէն կարելի է միայն հաւանիլ: Եթէ Ռուսո չափէ դուրս կ'երկարէ այս բացասական դաստիարակութիւնը, ոչինչ կ'արդիլէ զայն համառօտելու, սակայն այն պայմանով որ միշտ աչքի առաջ ունենալու է այս պարագայն թէ տղաքներուն տրուած ուսման նպատակը՝ անոնց գիտութիւն հագորդել չէ այլ միմիայն անոնց մէջ կազմել է գիտութիւնը ստանալու յատուկ գործին: Նախնական կրթութիւնը տարբեր բան մը չէ. այն կը պատրաստէ տղաքները որ կարող ըլլան քիչ վերջը ինքնին կըրթուելու. անոնց ճամբա կը բանայ, 'կարթնցնէ անոնց կարողութիւնները, զատնք կը կանոնաւորէ, կը մարդէ, կը զօրացնէ, անոն կուտայ աշխատելու մեթոտ մը:

Շարունակելի

Ամերիկա (f. r. m) — Տիար Վ. Ա.

Ստացանք ձեր խրկած դրամը:

Ա.ՁԴ

Եր փութանք իմացնել Ամերիկա բնակող բաժանորդներուն որ կրնան իրենց բաժնեգները մեզ վճարել ամերիկեան թղթագրամ ուղղարկելով թերթիս հասցէին:

Отговорникъ Д. Коларовъ.

Руссе, Скоро-печатница на Спиро Гулабчев.